դէպքից վշտացած եպիսկոպոսներին խորհրդի կանչեց և գործի հանգամանքները քննելուց յետոյ, որոշեց Պետերբուրգ ուղարկել Դաւիթ վարդապետին մի օրհնութեան կոնդակով, ուր խընդրում էր. «1) որ ս. Գրիգորի՝ Հայաստանի Լուսաւորչի դաւանութեան հետևող ռուսիարնակ հայերը, ինչպէս մինչև այժմ նոյնպէս և ապագային ս. Էջմիածնի Մայր Աթոռի իրաւասութեան և իշխանութեան ներքոյ մնան հոգևոր և եկեղեցու վարչական գործերում. 2) որ նրանց վրայ կարգուող եպիսկոպոսն այդ Աթոռի կողմից ընտրուի, իսկ Հայրապետին անյայտ և ուրիշ երկիրներից եկաւոր ինքնակոչ հովիւների մուտքն արգելուի. 3) և նրան մի Բարձրագոյն հրովարտակ շնորհուի, որը այն տեղի տաճարում մնայ ի նշան մշտական ողորմածութեան և ի յիշատակ բարեյաջող թագաւորութեան»։ Այս կոնդակը գրուած է 1 օգոստոսի 1766 ամի։ Կոնդակի հետ ընծայ ուղարկուեցան կայսրուհուն և թագաժառանգին Յովհաննէս Մկրտչի, Հռիփսիմէ կուսի, ս. Գէորգի մասունքն և Նոյեան տապանի մի մասը։

Միևնոյն ժամանակ Սիմէոն կաթողիկոսը կոնդակներ գրեց Աժդարխանի ռուսաց Մէֆոդիյ եպիսկոպոսին և Պետերբուրգում ու Մոսկվայում բնակուող հայերից մի քանիսին խնդրելով, որ Դաւիթ վարդապետի առաքելութեան յաջողուելուն նպաստեն։

Մայր Աթոռի դեսպանութիւնը բարեսէր ընդունելութիւն գտաւ Պետերբուրգի դրան կողմից։ Կայսրուհու հրամանով արտաքին գործոց Յանձնաժողովը յօրինեց մի հրովարտակ յանուն կաթողիկոսի և յանձնեց Դաւիթ վարդապետին՝ Նորին Սրբութեան հասցնելու համար։

Այդ հրովարտակում, որ գրուած է 30 յուլիսի 1768 թ., կարդում ենք, թէ «Ըստ օրինակի նախնեաց՝ Մեզ ևս հաճելի է Մեր կայսերական գթութիւնն ու մարդասիրութիւնն ընծայել թէ արդի գերազնիւ Սիմէոն կաթողիկոսին և թէ նրա հայրապետական աթոռի ապագայ յաջորդներին, ինչպէս և իւրաչիներին ու կառավարիչներին և բովանդակ ազնուաբարոյ Հայ ազգին։ Հաճելի է մեզ նաև թոյլատրել յիշեալ Սիմէոն կաթողիկոսին և նրա յաջորդներին, որ նրանք հոգևոր գործերի և եկեղեցական ծէսերի նկատմամբ՝ իրենց իրաւասութեան ներքոյ պահեն Ռուսաց Կայսրութեան մէջ բնակուող հայազգի ու հայադաւան մարդկանց... այս պատճառով՝ երբ որ դրանք պա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան